**REPUBLIC OF ARMENIA**
Ministry of Energy and
Natural Resources
Closed Joint - Stock Company
"Armenian scientific – research institute
for Nuclear Power Plant operation"
**"ARMATOM"**

**РЕСПУБЛИКА АРМЕНИЯ**
Министерство энергетики и
природных ресурсов
Закрытое акционерное общество
"Армянский научно-исследовательский институт
по эксплуатации атомных электростанций"
**«АРМАТОМ»**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
Փակ բաժնետիրական ընկերություն
«Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական
գիտահետազոտական ինստիտուտ»
**«ՀԱՅԱՏՈՄ»**

---

**24.02.2015թ. № 30**

«ԳԱԿ – ՇՀԱՊՁԲ – 11/22» ծածկագրով
Շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի
հնարավոր մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից,

«ԳԱԿ–ՇՀԱՊՁԲ–11/22» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՀԱՅԱՏՈՄ» ԳՀԻ ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրի համաձայն, կից պայմանագրի հավելված 4-ով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՀԱ–ՇՀԱՊՁԲ–11/22-15/3»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Երևան, Ծովակալ Իսակովի 50, «ՀԱՅԱՏՈՄ» ՓԲԸ, սենյակ 603 հասցեով, մինչև 2015թ. մարտի 6-ը ժամը 14.00:

Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Երևան, Ծովակալ Իսակովի 50, «ՀԱՅԱՏՈՄ» ՓԲԸ, սենյակ 1004 հասցեով 2015թ. մարտի 6-ին, ժամը 14.00-ին:

Գնման առարկա է հանդիսանում «ՀԱՅԱՏՈՄ» ԳՀԻ ՓԲԸ-ի կարիքների համար սեղմված բնական գազի ձեռքբերումը:

«ՀԱՅԱՏՈՄ» ԳՀԻ ՓԲԸ-ի կարիքների համար սեղմբված բնական գազի (որոնք կազմված են մեկ չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման գնման ժամանակացույցը և ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) №3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. Գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված №1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. Գնային առաջարկ (Հավելված № 2), Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/22» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում եմ կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«ՀԱՅԱՏՈՄ» ԳՀԻ ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ armatom@web.am

*Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման ընթացակարգի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը, ընդ որում՝*

*- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31—րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,*

*- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցների պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցմով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:*

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն

Վ. Գ. Պետրոսյան

0027 ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 50
г. Ереван, пр. Адмирала Исакова, 50
50 Admiral Isakov ave., Yerevan

Phone: (37410) 74-21-30
Fax: (37410) 73-46-10
E-mail: armatom@web.am